Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Աշոցք համայնքի
ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 20-ի
N 81-Ա որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը:

2. Թույլտվությունները՝ համաձայն սահմանված ձևաչափի, տրվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի կողմից:

3. Թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ՝ համաձայն սահմանված ձևաչափի:

4. Թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի որոշմամբ:

5. Թույլտվություն տալու հետ միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, հայտատուից գանձվում է տեղական տուրք:

6. Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրն ստանալուց հետո 3 օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում հաստատված թույլտվությունը տրվում է հայտատուի կողմից վճարված տեղական տուրքին համապատասխանող ժամկետով՝ վճարման օրվանից (եթե հայտատուի կողմից այլ ժամկետ չի նշվում):

7. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված: Թույլտվություն ստանալու մասին հայտը գրավոր մերժվում է հայտի մուտքագրման օրվանից երկու օրվա ընթացքում: Թույլտվություն ստանալու մասին հայտի մերժման վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:

8. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում հայտը չմերժվելու դեպքում այն համարվում է բավարարված:

9. Թույլտվությունը չի կարող հայտատուի կողմից փոխանցվել այլ անձի կամ օգտագործվել այլ անձի կողմից՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՁԵՎ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՇՈՑՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ _____ - 000000

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ _____

Տրված՝ _____ ***20 թ.***

Թույլատրված գործունեության անվանումը՝
_____.

Հայտատու անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը կամ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
_____.

Գործունեության տեսակի իրականացման վայրը,
_____.

Շինության տեսակը՝
_____.

Թույլտվության գործողության ժամկետը՝
_____ ***20*** -ից մինչև _____ ***20*** -ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՁԵՎ N 2

.....համայնքի
ղեկավար.....ին

Հ Ա Յ Տ

_____ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի (կազմակերպության) անվանումը և կազմակերպաիրավական ձևը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հարկ վճարողի հաշվառման համարը
.....
.....
2. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գտնվելու վայրը
.....
.....
3. Գործունեության տեսակի իրականացման վայրը, շինության տեսակը, հեռախոսահամարը, կապի այլ միջոցներ

.....
.....
4. Գործունեության տեսակը, որի իրականացման համար թույլտվություն ստանալու մասին հայտ է ներկայացվում
.....
.....
5. Թույլտվության ժամկետը.....
(նշել պահանջվող ժամկետը)

Ներկայացվող փաստաթղթերի ցանկ

№	**Փաստաթղթի անվանումը**	**Կցված է** (կատարվում է✓ նշում)
1.	Հայտ՝ լրացվածսահմանվածձևով	
2.	Հայտատու իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենը, ՀՎՀՀ, բանկային վավերապայմաններ	
3.	Հայտատու անհատ ձեռնարկատիրոջ (ԱՁ) պետական հաշվառման վկայականի և անձը հաստատող փաստաթղթի պատճենը	
4.	Հայտատու ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենը	
5.	Գործունեության իրականացման վայրի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը	
6.	Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիր	
7.	Տեղեկանք՝ համայնքի բյուջեի նկատմամբ պարտավորությունների մասին	
8.	Այլ	

Ստորագրելով այս հայտը՝ չեմ առարկում և տալիս եմ համաձայնություն իմ կողմից հայցվող ծառայությունը ստանալու նպատակով համայնքապետարանի աշխատակազմում իմ անձնական տվյալների մշակման և օգտագործման համար:

Ես տեղյակ եմ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքների մասին:

Ցանկանում եմ ծառայության տրամադրման հետ կապված փաստաթղթերը և/կամ ծանուցումները ստանալ
□էլեկտրոնային փոստի միջոցով
□ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով
□պատվիրված նամակով ուղարկելու միջոցով

Հայտատու՝ ---------- ----------
(ստորագրություն) (հայտատուի անուն, ազգանուն)
----- ---------- 20-- թ.